«Լիաշին» ՍՊԸ կողմից իրականացվող ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի Սյունիք բնակավայրի վարչական տարածքում 144 տեղ/հզորությամբ միջնակարգ դպրոցի և 40 տեղ/հզորությամբ մանկապարտեզի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նախնական հայտի վերաբերյալ 1-ին հանրային քննարկման

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

21.06.2024թ. **ք. Կապան**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /03.05.2023թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 28.12.2023թ. N 2343-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ որպես ազդակիր համայնք Կապանի մշակույթի կենտրոնի շենքում 2024 թվականի հունիսի 18-ին, ժամը 15:00-ին տեղի ունեցավ «Լիաշին» ՍՊԸ կողմից իրականացվող ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի Սյունիք բնակավայրի վարչական տարածքում 144 տեղ/հզորությամբ միջնակարգ դպրոցի և 40 տեղ/հզորությամբ մանկապարտեզի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նախնական հայտի վերաբերյալ 1-ին հանրային քննարկումը:

Քննարկմանը ներկա էին Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի բնապահպան Արմինե Գաբրիելյանը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի վերահսկող ինժեներ Նորայր Կարապետյանը «Շին-Կոմֆորտ» ՍՊԸ տնօրեն Վիգեն Աղդալյանը, «Լիաշին» ՍՊԸ աշխատակիցներ, ինչպես նաև Կապանի համայնքապետարանի և Սյունիքի մարզպետարանի աշխատակիցներ:

Հանրային քննարկման մասնակիցների անհատական կազմը կցվում է սույն արձանագրությանը:

Հանրային քննարկումը վարեց Կապան համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ՝ Գոռ Թադևոսյանը: Նա ողջունեց ներկաներին, ներկայացրեց օրակարգը: Որպես ծանոթություն հիշեցրեց, որ հանրային քննարկման վերաբերյալ կարելի էր ծանոթանալ «Առավոտ» օրաթերթի **2024 թվականի մայիսի 15-ի թիվ 084 (7085) համարում**, ինչպես նաև Կապանի համայնքապետարանի պաշտոնական կայքի (www.kapan.am) հայտարարություններ բաժնում: Հանրային քննարկման վերաբերյալ մինչ այժմ դիտողություններ կամ առաջարկություններ չեն ստացվել:

Զեկույցի համար խոսքը փոխանցվեց «Շին-Կոմֆորտ» ՍՊԸ ճարտարապետ Դավիթ Բաբայանին:

Զեկույց (Դավիթ Բաբայան) – Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ և ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգի այժմ իրականացվում է ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման 1-ին հանրային լսումը:

Հանրային քննարկման մասին համայնքը պատշաճ կերպով ծանուցվել է նախաձեռնողի կողմից և հինգօրյա ժամկետում հայտարարությունը տեղադրվել է «Առավոտ» օրաթերթում:

Ծրագիրն իրականացվում է թվով 300 դպրոցների կառուցման, վերակառուցման և հիմնանորոգման ՀՀ Կառավարության ծրագրի շրջանակներում: Նախատեսվում է կառուցել 144 աշակերտական տեղով և 40 մանկապարտեզի սաների համար կրթահամալիր տիպարային նախագծի հիման վրա տեղակապման միջոցով: Դպրոցը երկհարկանի է, կառուցվելու է մարզադահլիճ և հանդիսությունների սրահ, ինչպես նաև մեկ հարկանի մանկապարտեզ: Մասնաշենքները իրար միացված են լինելու դեֆորմացիոն կարերով: Դպրոցի, մանկապարտեզի և մարզադահլիճի մուտքերի մոտ նախատեսվելու են թեքահարթակներ: Առկա է լինելու վերելակ, այնպես որ շարժունակության խնդիրներ ունեցող երեխաները կարողանան օգտվել: Առաջին հարկում նախատեսվում են դասասենյակներ, կաբինետներ և բուֆետ, երկրորդ հարկում՝ դասասենյակներ, ինֆորմատիկայի սենյակ, ռազմագիտության դասասենյակ, ռոբոտատեխնիկայի սենյակ և ուսուցչանոց:

Մանկապարտեզի շենքը նախատեսվում է երկու խմբի համար՝ 20 տեղանոց:

Նկուղային հարկ է նախատեսված 21.6 × 20.4 մ, որն անհրաժեշտության դեպքում կօգտագործվի որպես թաքստոց: Բոլոր հարկերն իրար հետ կապված են աստիճաններով և ունեն հարկերը կապող միջհարկային ամբարձիչ՝ հաշմանդամների համար: Նկուղային հարկում է գրադարանը, խոհանոցը, բուժկետը, սանհանգույցները, ջրի ռեզերվուարը և այլն:

Դպրոցի տարածքը բարեկարգվելու է, առկա է 100 մ երկարությամբ վազքուղի, ավտոկայանատեղի, ինչպես նաև էլեկտրամարտկոցային ֆոտովոլտային արևային վահանակների համար ցանկապատով տարածք: Առկա են լինելու քիմիայի և ֆիզիկայի լաբորատորիաներ: Քիմիայի լաբորատորիայում լինելու է քարշիչ պահարան, նախատեսվելու են ջրի ծորակներ:

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա հանարավոր են որոշակի բացասական ազդեցություններ, որոնք սակայն կկրեն ժամանակավոր բնույթ: Վերջիններս հիմնականում առնչվում են շինարարական աշխատանքների հետ, հետևաբար իրենց բնույթով կլինեն սահմանափակ և կարճատև, կկիրառվեն մեղմացնող միջոցառումներ, օդի աղտոտման համար պարբերաբար կջրցանվի փոշոտ շինհրապարակը, շինարարության ընթացքում հնարավոր է աղմուկ և թրթռումներ: Հարակից տների և շենքերի բնակչության հնարավոր բողոքների դեպքում կիրականացվեն աղմուկի և թրթռումների մակարդակների գործիքային չափագրումներ, բուսականությունը և ծառերը կպաշտպանվեն, հողաբուսաշերտի հանումը, պահպանումն ու հետագա օգտագործումը կիրականացվի ՀՀ կառավարության 1404-Ն որոշմամբ սահմանված պահանջների համաձայն:

Շինարարական աղբը շինհրապարակից պարբերաբար կհեռացվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր՝ 2,4 կմ հեռավորության վրա՝ ծածկով ապահովված բեռնատարներով:

Հարց (Արմեն Ստեփանյան)- Նույն շենքի տեղում է կառուցվո՞ւմ:

Պատասխան (Դավիթ Բաբայան)- Ոչ, կողքն է կառուցվում, բայց շենքի նույն տարածքում:

Պատասխան (Նորայր Կարապետյան)- Շենքի մի կորպուսը քանդվում է հիմա, դասընթացները կընթանան մյուս կորպուսում, կառուցելուց հետո մյուս կորպուսն էլ կքանդվի և տարածքը կբարեկարգվի:

Հարց (Նորայր Կարապետյան)- Իսկ գեոլոգիա արդեն իրականացվել է:

Պատասխան (Վիգեն Աղդալյան)- Այո, իսկ հիմա գեոֆիզիկայի փուլում է, որից հետո կունենանք հաստատ կտրվածք, թե ինչ խորության վրա են դրվում հիմքերը, ըստ որի կտանք համապատասխան չափորոշիչներ և կիրականացվի քանդումը:

Հարց (Նորայր Կարապետյան)- Հիմա քանդման աշխատանքներ կարող ե՞նք սկսել:

Պատասխան (Վիգեն Աղդալյան)- Կարծում եմ մի փոքր շուտ է, մի քիչ սպասենք, ավելի էֆեկտիվ կլինի, այնտեղ դեռ սահմանազատում կա, ցանկապատում կա:

Խոսք (Արմինե Գաբրիելյան)- Այսօր իրականանում է 1-ին հանրային լսումը, ինչի մասին հանրությունը նախապես տեղեկացվել է, տպագրվել է «Առավոտ» օրաթերթում: Քննարկման արձանագրությունը կհանձնվի համայնքի ավագանուն, իսկ ավագանին 30 աշխատանքային օրվա ընթացքում կկայացնի իր նախնական որոշումը, որից հետո

համապատասխան փաստաթղթերի հետ կանձնվի ՇՄԱԳ փորձաքննության: Այնուհետ նախարարության կողմից կիրականացվի 2-րդ հանրային լսումը: Այդ ընթացքում ևս կարող է վերամշակել նախագիծը և 2-րդ հանրային լսման ժամանակ նույնպես կարող են բնակիչները բարձրացնել իրենց հուզող հարցերը: Շինարարության ընթացքում շինհրապարակի տարածքը կցանկապատվի, որպեսզի դպրոցի աշակերտները մուտք չունենան շինհրապարակ: Տարածքային զարգացման հիմնադրամի կողմից կիրականացվեն ամենամսյա մշտադիտարկումներ, որպեսզի պահպանվեն բնապահպանական և սոցիալական նորմերը շինարարության ընթացքում:

Հարց (Արմեն Ստեփանյան)- Քաղաքացիական պաշտպանության տեսանկյունից ինչ որ բան նախատեսվա՞ծ է:

Պատասխան (Վիգեն Աղդալյան)- Այո, ամեն ինչ էլ կա ըստ նորմաների, դեռ նախագծային փուլում է, կիսանկուղային հարկի հաշվարկը իրականացվել է դպրոցի երեխաների քանակությամբ, բայց ծառայելու է նաև տեղի բնակիչների համար՝ իր արտաքին մուտքերով: Նախնական նախագիծը համաձայնեցված է և անցել է համալիր փորձաքննություն, իսկ տեղակապման նախագիծը համաձայնեցման և արդեն փորձաքննության փուլում է: Տեղակապման և ընդհանուր բարեկարգման նախագիծը այժմ մեր ձեռքին է, կարող ենք տրամադրել, որպեսզի ուսումնասիրեք:

Հարց (Արմեն Ստեփանյան)- Փաստորեն շինարարությանը զուգահեռ ընթանալու է դասապրոցես:

Պատասխան (Վիգեն Աղդալյան)- Այո,մինչև ավարտը:

Հարց (Արմեն Մարտիրոսյան)- Տեղակապման համար էլ է՞ փորձաքննության եզրակացություն պետք:

Պատասխան (Վիգեն Աղդալյան)- Այո, փորձաքննության դրական եզրակացության դեպքում մենք արդեն փոխանցում ենք հիմնադրամին, որն էլ փոխանցում է համալիր փորձաքննության: Երկու անգամ համալիր փորձաքննություն է անցնում, որից մեկը տեղակապման համար է:

Լրացում (Արմինե Գաբրիելյան)- Այս նախագծերը անցել են փորձաքննություն, իրենք տեղակապմամբ են իրականացվելու՝ 0-ից ներքև և տարածքի բարեկարգում: Դպրոցները միջազգային նորմերին համապատասխան են կառուցվում, սեյսմակայուն են, հաշմանդամ երեխաների համար վերելակներ կլինեն:

Հարց (Նարինե Հակոբյան)- Ներկայումս դպրոցի տարածքում առկա ծառերի պահպանումը ինչպե՞ս է կատարվելու:

Պատասխան (Արմինե Գաբրիելյան)- Եթե խանգարի տեղակապմանը՝ ստիպված կլինենք որոշները հատել, իսկ որոշ ծառեր էլ հնարավոր կլինի տեղափոխել: Ինչքան ծառ կկտրվի, դրա փոխարեն նորից նորերը կտնկվեն: Շինարարության վերջում կիրականացվի տարածքի բարեկարգում:

Հարց (Արմեն Մարտիրոսյան)- Ծառերի հատման, տեղափոխման պատասխանատվությունը նախահաշվով արդյո՞ք նախատեսված է:

Պատասխան (Վիգեն Աղդալյան)- Ոչ, նախահաշվով նախատեսված են միայն նոր ծառերը, որ պիտի տեղադրվեն:

Լրացում (Նորայր Կարապետյան)- Շինարարին մենք կօգնենք և համայնքի համաձայնությամբ դպրոցը կտեղափոխի ծառերը:

Լրացում (Գոռ Թադևոսյան)- Ծառերի հատումը համայնքի համաձայնությամբ հասկանալի է, բայց չեմ կարծում, որ համայնքի միջոցներով պետք է իրականացվի տեղափոխումը:

Պատասխան (Արմինե Գաբրիելյան)- Այո, համայնքի համաձայնությամբ է և ոչ համայնքի միջոցներով, այլ ուղղակի համայնքից համապատասխան մասնագետի մասնակցությամբ:

Լրացում (Լիլիթ Առաքելյան)- Կարծում եմ այդ հարցը հեշտ կլուծվի, որովհետև գյուղապետարանի հարևանությամբ ազատ հողատարածքներ կան, կարելի է տեղափոխել այնտեղ, հետո աշխատանքների ավարտից հետո նորից հետ բերել դպրոց:

Պատասխան (Գոռ Թադևոսյան)- Հարցը դրան չի վերաբերվում, ծառերի համար համայնքապետարանը կտա իր համաձայնությունը, թե որտեղ պետք է դրանք տեղափոխվեն, այլ խոսքը վերաբերվում է աշխատանքների իրականացմանը, թե ինչպե՞ս պետք է իրականացվի՝ շինարարի միջոցներով և համայնքապետարանի համաձայնությամբ:

Պատասխան (Արմինե Գաբրիելյան)-Այո:

Հարց (Լիլիթ Առաքելյան)- Նախագծում հնարավոր է փոփոխություն իրականացնել և երրորդ մուտք էլ ունենալ: Ձեր նախանշած մուտքը և՛ բնակավայրից է հեռու, և՛ մանկապարտեզից: Իմ առաջարկած մուտքերը շատ հարմար են և՛ դպրոցի, և՛ նախակրթարանի, և՛ մեքենաների համար:

Պատասխան (Վիգեն Աղդալյան)- Նախագիծը դեռ մշակման փուլում է, հնարավոր բան կարվի երրորդ մուտք ստանալու համար: Խնդիրը հետևյալն է, եթե մենք հիմնովին քանդենք գոյություն ունեցող շինությունը, մենք շատ ավելի լավ բան կստանանք, բայց եթե մենք խնդիր ունենք պահելու, ապա ունենք մեկ տարբերակ և հետո հյուսիս-հարավի խնդիր ունենք տեղադրման: Եթե դպրոցը հիմնովին քանդենք՝ չորս մուտք էլ կարող ենք ստանալ, հիմա չենք կարող: Մինչ այդ ինչպես էին երեխաները գնում դպրոց: Պիտի դպրոցը քանդվի, որ մուտքը մոտ ստացվի:

Լրացում (Գոռ Թադևոսյան)- Քանի որ դպրոցը ամբողջությամբ այս փուլում չի քանդվում, տեսեք, թե ինչ լուծում կա, առաջարկեք լավագույն տարբերակը, որը որ հնարավոր է իրականացնել: Եթե դպրոցի տարածքում է լինելու, մուտքի հեռուն կամ մոտիկը այդքան էլ էական նշանակություն չունի, տարածքը միևնույն է ցանկապատվելու է, սահմանազատում է լինելու, դարպասներ դեպի ճանապարհ:

Պատասխան (Վիգեն Աղդալյան)- Այո, հետքրքիր պարսպատում է լինելու:

Հարց (Նարինե Հակոբյան)- Դասապրոցեսին զուգահեռ իրականացվող շինարարությունը կխանգարի դասընթացներին, արդյո՞ք համաձայնեցման ընթացակարգ կա, ասենք շինարարը չի կարող հարմարեցնել և մինչ ժամը 15:00-ն ոչ մի աշխատանք չկատարել:

Պատասխան (Նորայր Կարապետյան)- Հաշվի առնելով ամեն ինչը, որ այս պահին սահմանափակում ունենք, տեղ չունենք դասապրոցեսների համար, պետք է համակերպվենք, սակայն կարվի ամեն ինչ հնարավորության սահմաններում:

Ամփոփում (Գոռ Թադևոսյան)- Կարծում եմ պետք է համագործակցել դպրոցի հետ, իսկ եթե հարցեր կառաջանան և դպրոցի հետ համաձայնության չեն գա, ապա շինարարական ընկերությունը պետք է քննարկի Սյունիքի մարզպետարանի հետ:

Շնորհակալություն եմ հայտնում բոլորին մասնակցության համար:

<u>Հանրային քննարկման վարող՝</u>

Կապան համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ **Գոռ Թադևոսյան**

<u>Նախաձեռնող՝</u>

«ԼԻԱՇԻՆ» ՍՊԸ տնօրեն **Վահե Պետրոսյան**